

Իր կողմից՝ Մոնամէղ բէզն ասաց.

— Եթէ այսօր և նախանցեալ օրը մեր տեսած բոլոր բաները բացայայտիչ են անզլիացի ժողովրդի գործերի ու արարքների, ուրեմն ես կուզէի պատկանել այն սղմուտ ջրին՝ որից խմում է ուղտը:

Միրզա Ֆիրուզը յետոյ նկարագրեց իր արկածները:

Ո՛չ որ այնքան կարճ ժամանակում այնքան բան չէր տեսել ինչքան տեսել էր նա: Նա տեսել էր թագաւորին բազմած իր գահի վրայ, տեսել էր ամեն տեսակ զգեստներ, նա տեսել էր տակի, արծաթ, թաւիչ, փայտեր, սրեր և իշխանական ոսկէ զաւազաններ: Նա տեսել էր մարդկանց բազմութիւն՝ որին առաջնորդում էր կիզ՝ մագերով քեղիտղան, և որ ամենից վեր էր՝ տեսել էր կանայք ևս: «Օ՛ ինչպիսի կանայք» ասաց նա, «ես բոլորի վրայ էլ սիրահարուեցի. նրանք բոլորն էլ անքօղ էին: Ես տեսայ ձիւնից աւելի սպիտակ մարմիններ, տեսայ սպանող աչքեր, տեսայ ժպտացող ատամներ:»

Մենք զեռ այդպիսի դրութեան մէջ չէինք տեսել զեսպանին. բայց, ինչպէս ինքն ասում էր, կանանց թուում եղել էր մէկը որ միւսներից աւելի զեղանի էր եղել, և որի հրապույնների մասին նա զտառնցում էր: Երբէք նրա մտքով չէր անցել թէ մի մարդկային էակ կարող էր այդքան զեղեցիկ, սյգքան դիւթիչ լինել: Նրա սիրտը վառուում, խորովում էր նրա սիրով:

Քաջայայտ էր որ միմիայն սյգ հանգամանքի շնորհիւ էր որ նա հաշտուել էր՝ մնալ անհաւատների մէջ և այժմ մենք նոր հասկացանք մեր անմահ շէյխի խօսքի ճշմարտութիւնը թէ՛ «նատեցէք մահուան հրեշտակի հովտի ամենախուլ ստուերում և թողէք որ սէրը ձեզ ընկեր լինի. անապատն այն ժամանակ ձեզ համար դրախա կերեայ՝ և ձեր թշուառութիւնը՝ երանութիւն»:

Իր սիրած այդ զեղանի արարածին՝ զեսպանը անուանեց ջալիրէլջէլուր¹⁾: Նա երզուեց մեզ հաւատացնելով որ նրա աչքի տերերը ²⁾ աւելի քնքոյշ էր քան վարդինը, որ նա աւելի պայծառ էր քան 14-րդ օրուայ լուսինը, և որ նա՛ իր հասակի իսկ աչքերիբորումն³⁾ էր: Մի խօսքով, նա հաւատացնում էր որ նա մի կատարեալ փիւնիքս էր, որ նա «մէկերի մէկն» էր:

1) Միրզա չափշտակող: 2) Արտեանուներն է նշանակում: 3) Գազաթ, կատար, կեանքի զարուն:

Գլ. իւր

Միրզա Ֆիրուզը հրաւիրուած է շնորհիւ: Կոտ տեսնուած է որ նանդէսներու մտախառնութեանը կանանց է տրուած եւ ոչ թէ տղամարդկանց: Կրա դատողութիւնը դիմի խմելու մասին:

Այժմ ամբողջ քաղաքու մ կարծես թէ տիրուած էր մի նոր բայց ընդհանուր ոյժ, որ դրդուած էր մարդկանց հազար ու մէկ ձեռով ողջունելու և շնորհաւորելու միմեանց՝ այն էլ այնպիսի ազդիթներով որ բոլորովին նոր էին մեզ համար: Տղամարդիկ որոնուած էին կանանց, իսկ կանայք ընդունուած էին տղամարդկանց: Ասաւօտը նրանք այցելեցին միմեանց՝ խօսելով փոքր կարևորութիւն ունեցող խնդիրների մասին, յետոյ ձի նստելով կամ կռօք մտնելով գնացին համախմբուեցին մի տեղ. յետոյ ցրուեցին, զանազան խմբակներ կազմեցին ճաշելու համար: Թէպէտ մինչև նրանց ճաշի վերջանալը արդէն մեր քնելու ժամանակն եղաւ, այնուամենայնիւ նրանք կրկին հաւաքուեցին աւելի մեծ խմբերով, և պատրաստուեցին պարել այնպիսի ձևով՝ որ մեզ համար դժուար է բացատրել:

Այն օրը որ դեսպանը ներկայացել էր պարլամենտում, դրա յաջորդ օրը մէհմանդարն եկաւ նրա սօս և ասաց.

— Ահա մեզ համար հինգ ընթրիքի հրաւերներ այսօրուայ համար:

— Ալլահ իլ Ալլահ, բացականէց Միրզա Ֆիրուզը, հինգ հրաւերներ. բայց սի է կարող մէկ օրում հինգ անգամ ճաշել կամ ընթրել:

— Կարիք չկայ որ հինգ տեղումն էլ ընթրէք, պատասխանեց մէհմանդարը, բաւական է որ դուք միայն մէկ հրաւերն ընդունէք. դուք միայն մէկ տեղ ընթրեցէք, բայց կարող եք դրանից յետոյ միւս տեղերն էլ գնալ: Ահա այստեղ մի խումբ հրաւիրապրեր:

Մենք բոլորովին զարմացանք:

— Ո՞վ է կարող այդքան նեղութիւն կրել և էլի սպրել, ասացինք մենք: Մենք պարսիկներ ենք. երբ օրուայ վերջին ազօթքն ասուած է՝ մենք անկողին ենք մտնում և զարթնում ենք արշալոյսին: Այս լինչպէս բան է:

— Դուք շուտով կը սովորէք, ասաց մէհմանդարը: Այս եղանակին՝ մենք շատ քիչ տարբերութիւն ենք դնում ցերեկուայ ու գիշերուայ մէջ:

Առանց շատ տատանուելու, դեսպանը համաձայնեց և

պատրաստուեց մէնմանդարի ընկերակցութեամբ գնալ վէզրնե-
րից մէկի տունը, որը նրան հրաւիրել էր ընթրիքի: Նա հազա-
ւ իր ամինալու շորերը. գլխին ծածկեց շուրջը շալ փաթաթուած
հանդիսական գլխարկը և իր գօտու մէջ խրեց կոթն ազամանդ-
ներով դարգարուած դաշոյնը: Նա աւելի յարմար դատեց
ֆրանկտանի կօշիկ հագնել (շատ մեծ դէպքերու միայն նա
հագնուած էր մեր պարսկական բարձրակրունկ մաշիկները) ու-
րովհետև անկարելի էր որ նա միշտ կարողանար իր կօշկա-
տարին իր հետը տանել: Նա պատուիրեց ինձ իրան ընկերակ-
ցել, ևս էլ աշխատեցի ըստ կարելոյն լաւ հագնուել:

Ոչ ոք չեկաւ մեզ յայտնելու թէ ինձոյքը պատրաստ է.
նչ ոք չեկաւ մեզ բխմիլլահ տանու, այլ մենք ուղղակի գնա-
ցինք վէզրի տունը, որի դուռն երբ հասանք՝ մի քանի յաղթ-
անդամ ծառաներ պինդ բաղխեցին մի ուրիշ փակուած դուռ՝
յայտարարելով մեր գալուստը:

Իսկոյն ներսից դուրս եկան մի քանի ուրիշ ծառաներ,
որոնք մեզ ներս հրաւիրեցին, և մինչև մենք հասանք դաշլրճը
գեապանի անունը մի քանի տեղերու արտասանուեց որպէս
յայտարարութիւն: Դահլիճի մուտքու մեզ ընդունեց վէզիրը,
որը իր հիւրերից շատերի պէս շրջուած էր այս ու այն կողմը.
որովհետև, ինչպէս երևաց, այդ մասին կատարեալ ազատու-
թիւն կար:

Մենք յետոյ գնացինք վէզրի կնոջ մօտ, որը իրան նոյն-
քան ազատ էր պահուած ինչպէս իր ամուսինը, և մեծ ջանք
էր անում մեր գալուստը ողջունելու իր քաղցր ժպիտ-
ներով:

Այնտեղ կային նաև մի քանի ուրիշ խանութներ, որոնք
շատ բաղաբաւարի և շատ գեղեցիկ կանաչք էին: Եթէ նրանք
բօղով ծածկած լինէին իրանց սպիտակ մարմնի որոշ մասերը՝
ինձ իսկոյն սիրային տեսնող կը բռնէր. բայց քանի որ նրանք
ծածկուած չէին՝ ևս հազիւ թէ մտածեցի որ նրանք կա-
նաչք են:

Սօսակցութիւնն սկսուեց: Բոլոր ներկայ եղողները կար-
ծես թէ մտահոգ էին իմանալու թէ արդեօք այդ օրը մենք
տեսնլ էինք արևը. որովհետև բոլորը պնդում էին որ այդ օրը
արևը տեսնուել էր: Բայց թէ միայն մէկ ժամ կամ կէս՝ այդ
մասին կարծես թէ իրանք էլ կասկածում էին:

Դեսպանը յայտնապէս ձանձրացած լինելով շարունակ
տկնարկութիւններ լսելով մեր կարծեցեալ արեպաշտութեան
վերաբերմամբ դարձաւ վէզիրի կնոջը և սասց նրան:

— Դուք, ի հարկէ, ձեր երկրում արևի կարիք չունիք,

քանի որ այնպիսի խանութներ ունիք՝ որոնց աչքերը լոյս և ուրախութիւն են տալիս աշխարհին:

Երբ թարգմանուեց դեպքանի այս խօսքը, բոլորը հաւանեցին, և վէզիբը շատ ուրախ տրամադրութեամբ ասաց.

— Եթէ նորին գերագանցութիւնը հաւատալիս լինի, և եթէ նա պաշտելու լինի այս արեգակներին՝ (մատը ուղղելով դէպի տիկիներբի աչքերը) փոխանակ իր արեգակին՝ այն ժամանակ պիտի զգուշանանք մենք... Այն ժամանակ մենք պիտի սկսենք նարեմներ կառուցանել և քօղացուների գործարան բաց անել...

Այս խօսքի վրայ տեղի ունեցաւ բաւական շատ ախորժելի կատակ՝ որը ռզեորեց ամբողջ խմբին և իսկապէս այդ կատակները մեզ ծանօթացրին անդլիացուց բնաւորութեան հետ՝ որին մինչև այդ ժամանակ անծանօթ էինք մնացել:

Մենք պարսիկներս, որ սիրում ենք զուարճախօսութիւնը, շատ հրճուեցինք տեսնելով որ այդքան մեծ խնդարտութիւն գոյութիւն ունի այդ մարդկանց մէջ, որոնք սովորաբար ասլոււմ են մարախուղի մէջ: Եւ դեպքանը, մտածելով թէ մի կարգ ու կանոն պիտի լինի նրանց մէջ՝ թէ ո՞վ պիտի սկսի առաջին կատակը՝ և տեսնելով որ նրանք ընդհանրապէս շատ լռակեաց են՝ յօժարութեամբ յանձն առաւ ընդհատել լուսութիւնը, և գրանից յետոյ էլ նա միշտ օգտուելով առթից, զուարճախօսութիւն էր անոււմ, ի հարկէ, աշխատելով մի պատշաճ ու վայելուչ կատակ անել:

Ներս մտաւ մաղերը փոշով սպիտակացրած մի մարդ և հրաւիրեց մեզ ընթրիքի: Նոր սկսուած զուարճախօսութիւնն ընդհատուեց, և երբ խումբը կանգնեց՝ ճաշարանը գնալու, մենք տեսանք որ անդլիացիները մէջ էլ նախապատուութեան մասին նոյնքան կարգ ու կանոն կար՝ որքան մեր երկրում:

Բայց Ալլան, Ալլան, ուրեք էին այն անձնաւորութիւնները, որոնց տրոււմ էր նախապատուութիւնը—կանայք, այն նրանք, կանայք էին այդ անձնաւորութիւնները: Երբ ևս այդ ճշմարտութիւնը յայտնեցի Մոհամէդ բէգին՝ նա շկարողացաւ հաւատար: Սեղանատունը գնալու համար՝ առաջ կանայքը դուրս գնացին սենեակից. տղամարդիկն էլ կարծես մաքառում էին նրանց առաջնորդելու շնորհը ձեռք բերելու համար:

Միրզա Ֆիրուզին ամենայն կերպ պատուեցին. նրան հրաւիրեցին վէզրի կնոջ հետ միասին ձեռք ձեռքի տուած մտնել սեղանատունը: Թէպէտ առաջին անգամն էր որ նա՝ դեպքանը, կատարում էր այս ծէսը, այնուամենայնիւ շատ լաւ կատարեց:

Առանց մինչև անգամ մտածելու ձևերը լուանալու մասին, թէ՛ մարդիկ և թէ՛ կանայք առաջացան դէպի ճաշարանը. բայց թէ՛ մենք մուտուլմաններս ինչպէս էինք գործ ածելու մեր ձախ ձևերը ¹⁾; այդ արդէն մե՛ծ մտածութեան նիւթ էր մեզ համար, սակայն քանի որ մենք՝ գտնուում էինք անհաւատների երկրում, ապառ էինք համարում մեզ՝ վարուելու ինչպէս որ կամենայինք:

Մենք մտանք մի մե՛ծ սենեակ, որի կենդրոնում պատրաստուած էր մի փառաւոր սեղան: Այդ սեղանն այնքան տարօրինակ կերպով զարգարուած էր՝ որ դրա նման մենք երբէք չէինք տեսել, սրա շուրջը մենք նստանք:

Ճշմարիտ որ, այստեղ՝ սեզանատունը աւելի մեծ ազմուկ էր լինում քան լինում է մեր խնճոյքներում. որովհետև ճառան կօշիկներով ծառաների անդադար շարժուելն ու գործելը, պնակների ու բաժակների չրխկչրխկոցները ու զրնդոցները, սուր դանակների ու գործիքների ձայները և, ամենից վեր՝ խմրի խօսակցութեան ձայնը, այնպիսի աղմուկ էին հանում, որին մենք շատ քիչ էինք սովոր, և որը Պարսկաստանում շատ անվայելուչ ²⁾ է համարուում:

Բայց տեսարանը շատ ողորիչ էր. միայն ասես որ մի Հաֆէզ չկար որ երգէր և գովարանէր զանազան տեսակ գինիները—գինիներ՝ որոնց մասին մեր օրհնեալ Մարգարէն ամզամ չէր կարող գաղափար կազմած լինել: Այն, եթէ մի Հաֆէզ լինէր, հիւրասիրութիւնը շատ կատարեալ կը լինէր. բայց ասես որ չկար:

Թէ՛ բազմատեսակ կերակուրներն ինչից էին բաղկացած՝ ես ինձ նեղութիւն չպատճառեցի իմանալ, և առանց սպասելու որ իմանայի թէ՛ սխաբը ըստ կարգին էր մորթուել կամ թէ՛ հաւերը ճշմարիտ մահով էին մեռել՝ ես սկսեցի անոյշ անել ինչոր մօտս էր բերուում:

Ես միայն մի-երկու անգամ տատանուեցի մի նոր տեսակ մսի վրայ, որ ինձ թուաց թէ՛ պիղծ գազանի (խոզի) միս էր. սակայն, յանուն Ալլահի, ասացի ես, էլ ինչ եմ քըննում այս միսը, էլ ի՞նչ եմ վախենում պղծուելուց՝ քանի որ մենք մեր Անգլիա հասնելու օրից՝ ամբողջ մտրմնով ապականուել ենք անհաւատների մէջ ապրելով:

1) Կերակուրելիս՝ պարսիկները գործ են ածում միայն իրենց աջ ձեռքը: Զ. Թ.

2) Պարսկական խնջոյքներում ծառաները շատ լուռ են պահում իրանց, նրանք շարժուում են անկօշիկ և քանի որ սեղանի վրայ պնակներ, գզակներ ու դանակներ պատառաքող չեն գործ ածուում, ճաշը շատ լուռ է անցնում:

Եթէ Մոհամէդ բէգը մեզ հետ լինէր, նա ամբողջ ինչոյքի ժամանակ իր ուսերի վրայ կը փշէր: Դեռայանն իրան այնքան ազատ և հանգիստ էր պահում սեղանի վրայ, ինչպէս պահում է իրան ամենափորձառու անգլիացի ուտողը: Զարմանալի ճարտիկութեամբ նա գործ էր անում գդալ, դանակ, պատառաքաղ. սակայն ես՝ պիտի խոստովանուեմ որ նրա պէս բախտաւոր չէի. որովհետեւ մի երկու անգամ սխալներ գործեցի: Սխալներն պատճառը իմ նախկին սովորութիւնն էր. և ցաւալին այն է, որ սխալներս շատ վատ տպաւորութիւնս գործեցին ինձ մօտ նստած հիւրերի վրայ:

Ընթրելիս՝ ես կերայ հարեանիս բաժին հացից—մի յանցանք՝ որ այստեղ այնքան վերաւորական է համարուում, ինչքան հակառակն է համարուում Պարսկաստանում: Ես մի անգամ վերցրի նրա գինու բաժակն ու խմեցի. մի անգամ էլ իմ պնակից մատներովս մի պատառ վերցրի և հրաւիրեցի հարեանիս, բայց նա այնպէս ցնցուեց, որ կարծես թէ ես իրան թոյն էի առաջարկում:

Թէպէտ մենք մեր ծնկները վրայ չէինք նստել, ինչպէս մեր սովորութիւնն էր, բայց բոլորովին հանգիստ էինք աթոռների վրայ՝ մեր ստները կախ արած: Այո, աթոռների վրայ հանգիստ էինք, բայց ընթրիքի երկարատեւութիւնը սպանեց ինձ: Վերջապէս խումբը շարժուեց, բայց ես դարմացայ երբ տեսայ որ միայն կանաչք դուրս գնացին: Այս բանը մի քիչ նման էր մեր սովորութիւններից մէկին: Են հետաքրքրուեցի իմ հարեանից թէ ինչո՞ւ միայն կանաչքը դուրս գնացին. բայց նա չկարողացաւ բացատրել:

— Գուցէ ձեր սուրբ գրքում այդպէս է անօրինուած, ասացի ես, կամ գուցէ ձեր թագաւորն է այդպէս հրամայել:

Դարձեալ նոյ չէր հասկանում ինչ պատասխանել, և ես կզրակացրի թէ կարող է այդ սովորութիւնը անուում լինել իսլամից:

— Հարեանս ակնարկեց որ կանանց բացակայութիւնը աւելի ազատութիւն է տալիս տղամարդկանց՝ խօսելու և գինի խմելու:

— Ա, ուրեմն, ասացի ես, դուք այդ կանոնը պիտի վերցրած լինիք արեւելիներից, որոնց մէջ ասնում է թէ՛ «նախ ընթրիք՝ ապա զրոյց». սակայն եթէ ձեր նպատակը գինի խմել է, այդ ձևով չ'պիտի խմէք: Արէք ինչպէս մենք ենք անում Պարսկաստանում: Առաւօտուանց կանուխ վեր կաց, գնա մի պարտէզ, նստի՛ր այնտեղ մի վազող առուակի մօտ, ծաղիկներ դիր գլխիդ, ունեցի՛ր երգիչներ ու սոխակներ, խմի՛ր մինչև

անդգայանաս, սպասիր մինչև կրկին սթափուես, ուշքի գառ, յետոյ էլի խմիր և ժամանակի մասին մի մտածիր: Յերեկ և գիշեր նոյնը կրկնիր, մինչև վերջապէս դու այնպէս ընդորովին գինով թրջուես՝ որ ժաժմանակ լինի ասելու «բաւական է, բաւական»:

Թէ արդեօք հարեանս հասկացաւ ինձ (որովհետև ես փորձեցի անդլիէրէն խօսել հետը) չգիտեմ, սակայն նա սկսեց արժանքով ու գարժանքով գիտել ինձ:

Վերջապէս ընթրիքը վերջացաւ, և մենք անլուայ ձեռքով գնացինք մեծ դահլիճը, ուր վեզրի կիներ և խանութները պատրաստ սպասում էին մեզ ընդունելու:

Գլ. ի/Թ.

Միրզա Ֆիրուզը գնում է Ա. մարտնի շրջանի մ.: շ: Հաջի քարայի գլխորդութիւնները վաղ և քաղրիլ պարբի վրայ:

Գեո շատ ժամանակ չէր անցել, ինչ մենք վերադարձել էինք տիկիւնների մօտ՝ երբ վեզրի կիներ, որը իր հաճելի վարքով ձեռք էր առել գեապանի մօրուքը, հրաւիրեց նրան հետեւել իրան գէպի ընդհանուր հիւրասիրութեան տեղը, ուր, ինչչպէս մենք հասկացանք, մի տեսակ թագուհի էր համարում նա: Այստեղ, ինչպէս մէհմանդարն ասաց, հաւաքուել էին անգլիացոց գլխաւոր միրզաները, խաները և բէգերը իրանց կանանց և աղջիկերանց հետ միասին: Եւ նրանց այդ շրջանը կամ խումբը կոչուում էր Ալմար: Այս բառը հաստատեց մեր այն կարծիքը թէ անգլիական լեզուի մեծ մասը առնուած է պարսկերէնից և արաբերէնից. որովհետև արմաք ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ ալ մագ—ծուծը—այսինքն անգլիացի աղնուականների գոհարները կամ ծագիկները:

Արդէն մեր աչքերը ծանրացել էին քնով, և մենք յօրանջելով հարցրինք.

—Ի՞նչն է հարկադրում իշխաններին, միրզաներին, խաներին և նրանց կանանց ու աղջիկերանց՝ գիշերուան այս ժամին հաւաքուել: Մի՞թէ քսանչորս ժամուայ ընթացքում էլ ուրիշ ժամանակ չկայ կատարելու այս մեծ հանդէսը:

—Օ՞, ասաց վեզրի կիներ, գեո բացատրութեան ժամանակ չկայ, դուք շուտով կը տեսնէք, և ձեր հարցն ինքն իրան կը տայ իր պատասխանը:

Շատ ուրախ տրամադրութեամբ՝ գեապանն արեց, ինպէս որ ցանկացուեց, և թէպէտ մենք երկուսս էլ քնի համար մի-

նժում էինք, այնուամենայնիւ հետեցինք վէզրի կնոջը: Վէզրն
ինքն ու իր հիւրերից շատերն էլ նոյնպէս հետեցին:

Պարսկաստանում ս'վ կը հաւատար եթէ ևս ճշտութեամբ
նկարագրելու լինէի այն բոլոր բաները որ տեսայ այս եր-
ջանիկ գիշերը: Ո՞վ կը հաւատար ինձ, եթէ ևս պատմելու
լինէի թէ այստեղ ևս տեսայ աւելի շատ աղամանդներ, յա-
կինքներ, զմբուխտներ և շատ այլ տեսակ դոճարներ՝ քան
ունի Շահը կամ երբևիցէ ունեցել է նոյն իսկ մեծ մուզուլի
հայրը: Ո՞վ կը հաւատար ինձ, եթէ ևս ասէի որ այստեղ ևս մի
հայեացքով աւելի շատ կանայք տեսայ՝ քան կան Տիեզերքի
Ապաւինի հարեմում, և աւելի մեծ գեղեցկութիւն մի անկիւնում
քան եղև էր ամբողջ Ասիայում: Ո՞վ կը հաւատար ինձ, եթէ
ևս ասէի որ տեսայ աւելի լուսափայլ երեսներ ու մորթի,
քան Գարրիէլ Նրեշտակինը, աւելի սիրուն վզեր քան սիրա-
մարդինը, այնպիսի աչքեր՝ որ բոցավառում էին մարդու սիրտ-
և ժարմիններ՝ որ կարող էին յափշտակել նոյն իսկ Ձէնէլիք
լեւներում ապրող գէրվեշին:

— Փան, փան, փան, ասացի ևս ինձ ու ինձ. եթէ աշխար-
հում կայ կեանք, ուրախութիւն և վայելչութիւն՝ դրանց իսկ
էութիւնն այստեղ է: Փան, փան, ս'ւր է Պարսկաստանն իր
մօրուքներով, իր սշխարի մորթիներով, իր երկայն քօղե-
րով, իր բանասարկուած կանանցով՝ և ս'ւր է Անգլիան իր
հարստութեամբ, իր պաշտելի կանանցով և իր ընկերական
ուրախութիւններով և վայելքներով, որ նա բաշխում է իր
զաւակներին:

Այս իմ առաջին տպաւորութիւնն էր, և ևս հաւատում եմ
որ դա կարգացում էր երեսիս վրայ. որովհետև շուտով ինձ-
մօս եկաւ մի մարդ՝ որը շատ հաճելի կերպով խօսեց հետս մեր
լեզուով, և որը հետաքրքրուեց իմանալ թէ իմ առջև բացուած
տեսարանի մասին ինչ էի մտածում ևս:

Ես չկամեցայ որ նա կարծէր թէ մենք այնպիսի տաճիկ-
ներ ¹⁾ էինք, որ չէինք տեսել աշխարհը. ուստի զսպելով իմ
խսկական զարմանքը՝ նրան շատ սառնութեամբ պատասխա-
նեցի.

— Է՛հ, բաղ նիւթ (վտտ չէ):

Իմ այս նոր բարեկամը, որը, ինչպէս երեսայ, եղև էր
Հնդկաստանում ինչպէս և Ֆարսի հարաւային կողմերում, ժրպ-
տաց իմ պատասխանի վրայ և ասաց.

¹⁾ Պարսկաստանում տաճիկ նշանակում է գիւղացի, ուսմիկ, վայ-
րենարարոյ:

—Դուք պիտի խոստովանուէք որ սա շատ աւելի հաճելի սեփարան է, քան եթէ կանանց երեսները ծածկուած լինէին՝ ինչպէս Պարսկաստանում:

—Բնի, բնի (այո՛, այո՛) ասացի ես. բայց միայն մէկ թերութիւն եմ նկատում եւ: Ի՞նչ է պատճառը որ այսքան մեծ թուով պառաւ կանայք կան. գոնէ դրանք կարող կը լինէին ծածկուել քողով:

—Թերես, ասաց նա, այդ աւելի լաւ կը լինէր. բայց այս սպաս երկրում՝ ամեն անձն իրաւունք ունի իր երեսը պահել ինչպէս որ կամենում է:

—Բայց մի՞թէ դուք միջոց չունիք ազատելու այդպիսի աւելորդ պառաւ կանանցից, հարցրի ես: Մեր Շահ Արքայի մասին ասուած է, որ նա մի անգամ ստիպուեց սպանել տալիք պառաւ ներքինիներից մի քանիսին, որպէս զի ինքն հաճոյք զգար. նա սպանեց նրանց, սրովհետեւ նրանք բաւական շուտ շուտ չէին մեռնում որ ինքը հաճոյք զգար:

—Ա՛, ասաց բարեկամս ծիծաղելով. այդպիսի հանգամանքների տակ մեռնող կամ սպանուող մի որեւէ պառաւ կնոջ մահը իսկոյն ապստամբութիւն կը յարուցնի այստեղ: Այս երկրում մենք Շահ Արքաս չունենք,

Նա յետոյ շատ բարեխոսութեամբ յանձն առաւ բացատրել ինձ շատ բաներ, որ նա գիտէր թէ մեզ համար նոր պիտի լինէին, որովհետեւ նա ծանօթ էր մեր սովորութիւններին: Նա ամենից ատաջ մատնացոյց արեց թագաւորի որդիներէից մէկը, որ խմրի մէջ բայում, խօսում, զբաղում և վարում էր այնպէս՝ ինչպէս միւսներն էին անում: Միայն մէկ բանով նա տարբերում էր միւսներէից, այդ այն էր որ բոլորն աշխատում էին որքան կարելի էր՝ իրանց մէջքները դէպի նրան չկանգնէին:

—Ա՛, ասացի ես. միայն այդքանով մեր շահագանները չեն բաւականանայ, նրանք այդպիսի տեղ չէին գալ առանց փակնդադի և առանց մի լաւ նուէր ստանալու տան դուռն հասնելիս: Բայց, մի՞թէ ձեր իշխանը ոչինչ չէ ստանում իր այդ գիջողութեան համար:

—Բացի թէից, կարագից և հացից նա ուրիշ ոչինչ չէ ընդունում, պատասխանեց բարեկամս:

—Զարմանք, ասացի ես. դուք անըմբռնելի ժողովուրդ էք. ձեր երկրում թագաւորներն ու արքայորդիները ոչինչ նշանակութիւն չունին համեմատած միւսների հետ: Մարդ այնպէս է ենթադրում որ դուք այնքան քիչ նշանակութիւն էք տալիս

ձեր թագաւորներին ու շահագրաններին՝ ինչքան մեր թագաոր-
ները տալիս են հասարակ մահկանացուներին:

—Արժանաւորութիւնը, ասաց բարեկամս, արժանաւորու-
թիւնն է միայն մեր ղէջլէն—այսինքն այն կէտը, որին մենք
երկրպագում ենք:

—Եւ միթէ որեւէ արժանաւորութիւն ունի այդ մարդը,
հարցրի ես, մասնացոյց անելով արժուի աչքերով մէկին, որը
բոլորի ուշադրութիւնը գրաւում էր, և որին մօտենալը մեծ
շնորհ էր համարոււմ: Այդ մարդն անշուշտ թագաւոր պիտի
լինի, եթէ միւսը շահագրէ է:

—Իուք լաւ էք գիտում, ասաց խօսակիցս, որովհետեւ
այդ անձնաւորութիւնը ապացուցանում է այն՝ ինչ ես ասացի:
Նա իշխան չէ: Նա մի անձնաւորութիւն է, որ այս դարում
ամենամեծ յաղթութիւնն է արել. նա աշխարհիս «ճշտարար,
խաղաղարարն» է, նա յաղթողն է այն անձի, որը անյաղթելի
էր համարոււմ... Թէպէտ նա ազնիւ տոհմից է, բայց նա իր
կեանքն սկսեց որպէս զինուոր՝ ունենալով իր հետ ոչ այլ ինչ,
եթէ ոչ իր սուրն ու սիրտը: Նա զերագոյն արժանաւորու-
թեամբ միայն՝ այսօր իր հայրենիքի վահանն ու լանջապանակն
է համարոււմ և ազգերի հիացման առարկան:

—Բայց տեսէք, ասացի ես, տեսէք, նա ի՞նչ է անում:
Ալիի մօրուքը վկայ, տեսէք նա մի բաժակ թէյ է ածում այդ
պառաւ կանանց ամենապառաւի համար... Նա կատարում է
մեր ծառաների մէկի պաշտօնը:

—Բարի գործ կատարելու մէջ՝ ոչինչ անպատուութիւն
չկայ, ասաց բարեկամս:

—Ինչպէս ոչինչ անպատուութիւն չկայ «աշխարհը խաղաղա-
ցնողի» համար՝ երբ նա թէյ է մատակարարում մի պառաւ
կնոջ: Վայ, զարմանալի, այդ ինչ խօսօքեր են: Մեր Նաղիբ
Շահը (անշուշտ դուք կրնդունէք որ նա նոյնքան մեծ արիւն
խմող էր, որքան է այս ձեր զագին) ամենեին չէր կարողանում
հանգիստ քնել, եթէ նա օրեկան մի քանի գլուխ չէր կտրել
տալիս՝ որպէս զի ժորովուրդը ակնածէր իրանից և պատշաճ
յարգանքով վերարբերուէր դէպի իրան: Օ՛, ի՞նչ կը մտածէր նա՝
Նաղիբ Շահը՝ ձեր պառաւ կանանց մասին:

—Այդ մասին մեր զգացումները հակառակ են և միշտ էլ
հակառակ պիտի մնան ձերին, ասաց խօսակիցս, բայց եկէք,
ասաց նա, եկէք տեսէք պարը. սա նոր բան է ձեզ համար, և
վստահ եմ որ ձեզ հաճոյք կը պատճառի:

Մենք գնացինք այնտեղ՝ ուր մի խումբ շատ գեղեցիկ
ազջիկներ—ամենագեղեցիկ ազջիկները որ մաշի կարող է և—

րեակայել—լուրջ կերպով զրադուած էին՝ զանազան դիրք տալով իրանց մարմինն: Մի խումբ երիտասարդներ էլ բազմատեսակ սյուրումներ և ծածածոութիւններ էին անում, և մեծ մարմնամարդութիւն էին կատարում: Այդ խմբի շրջանում մեծ քաղաքավարութիւն և վայելչութիւն էր նկատուում: Նրանք միմիանց ձեռք բռնում էին միայն մատերի ծայրով, աչքերով ակնարկութիւններ անել և ժպիտներ չկային: Նրանք բոլորն էլ այնպէս էին պարում, ինչպէս կը պարէին զէրվիշները, և ստուգու, նրանք շատ լուրջ գործով էին զրադուած:

Իմ խօսակից բարեկամը գիտէր որ մեր երկում կամ արեւելքում միայն նրանք են պարում, որոնք վարձուում են պարելու համար. ուստի նա հաւաստիացրեց ինձ, որ այս պարողների խմբի բոլոր անդամները պարում էին միմիայն իրենց դուարձութեան՝ և ոչ երբէք վարձատրութեան համար:

— Բայց անշուշտ ոչ թէ այդ մարդը, ասացի ևս ակնարկելով պարողներից մէկին՝ որի գէմքը ցաւ էր արտայայտուած և որի ոտները կարծես թէ պինդ սեղմուած էին նեղ կօշիկների մէջ, նրա պարարտ մարմնի ծակոտիւններից դուրս հոսող բրտինքը ցոյց էր տալիս թէ նա ինչքան մեծ ճիգ էր թափում:

— Յամենայն դէպս, ասաց բարեկամս, ինչ էլ որ լինի նրա այդ ջանքի շարժառիթը, նա երբէք վարձատրութիւն չէ տանում: Մեր վարձկան պարողներին կամ խաղացողներին դուք կը տեսնէք երբ դնաք մի տեղ, որ կամաւ պատրաստուած է հէնց այդպիսիների խաղի համար:

— Բայց այս ինչ է նշանակուած, հարցրի ևս, տեսնելով որ պարի մէջ մի ընդհանուր փոփոխութիւն տեղի ունեցաւ. որովհետեւ առաջին գործողութեան միջոցին իմ նկատած շատ մեծ վայելչութիւնն ու քաղաքավարութիւնը յանկարծ բոլորովին բացակայեցին յաջորդ պարի մէջ: Մարդիկ ու կանայք զոյգ-զոյգ, երես-երեսի հանդէպ, թեկըր միմիանց իրանի շուրջը ձգած, սկսեցին անփոյթ կերպով արագութեամբ վազալ, պտոյտ գալ, մերթ միմիանց բաց թողնելով և մերթ էլ զարկուելով մրցակից պարողներին. նրանք այնպիսի շարժումներ էին անում, սր բոլորովին դուրս էին պատշաճութիւնից և ծանրաբարոյութիւնից:

— Սովորութիւնը մեզ ընտելացնում է ամեն բանի հետ, ասաց խօսակիցս: Այս պարը վերջերս է մուտ գործել մեր մէջ: Սկզբում դա խիստ զիմազրութեան հանդիպեց. սակայն մեր մէջ կայ մօզա անունով մի բռնակալ որ մինչև անգամ ձեր Շահնշահից էլ աւելի դեսպոտ է: Իրա վճիռները աւելի գօրեղ, աւելի խիստ են, բան բնականութիւնը կամ պատուազգացու-

թիւնը: Եւ դա է որ, ինչպէս տեսնում էք, բառնում է համա-տութիւնը և մեզ մի ազգ է դարձնում, որ բնականաբար տրամադրւում ենք պնայելու և սքանչանալու ամեն բանի վրայ, որ դարգացումն ու յառաջադեմութիւն է բնծայում մեզ: Դա մեզ դարձնում է ծաղրալի, դա մեզ թեթևամիտ նմանուողներ է դարձնում:

— Վա՛ն, արդեօք աչքերս չեն խարում ինձ, ասացի ևս յանկարծ: Օրհնեալ Մարգարէն վկայ, տես ահա ձեր մեծ վեզիբը պարում է:

— Այո՛, նա պարում է. ասաց նա շատ պող կերպով: Նա պարում է. մենք բոլորս էլ պարում ենք. պարում է թագաւորն էլ, նրա բոլոր պալատականներն էլ, մեծ վեզիրն էլ, արքունի դանձապահն էլ, ներքին և արտաքին գործոց նախարարներն էլ, զօրաց ընդհանուր հրամանատարն էլ, ծովապետներն էլ—բոլորն էլ, բոլորն էլ պարում են: Ո՛չ մի օրէնք չկայ որ արգելք դառնայ նոյն իսկ մեր եկեղեցու գլուխների և մեծ դատաւորների պարելուն: Մեր երիտասարդ բաճանա-ներն էլ, օրէնագէտներն էլ պարում են:

— Երբու՞մ եմ ձեր հոգով և իմ պապերի մօրուքներով, ասացի ևս, որ եթէ մեր Շահը մէկ անգամ իր վեզիրներից մեկին տեսնի պարելիս, նա իսպառ վերջ կտայ նրա զուարճութեանը: Նա ճիպոտների այնքան սաստիկ հարուածներ կը տայ նրա ոտների տակին, որ նրա եղունգները կը թափուին:

Ի միջի այլոց, ևս տեսայ մի տարօրինակ գէմբով ըրրը՝¹⁾ որի շորերը աւելի պինդ կպած էին իր մամին, քան խմբի միւս անդամներինը: Կարծես նա խորին սգի մէջ էր. ²⁾ նրա զլխի կատարը տափակ էր, իսկ զլխի ետևի մազերը խոպոպուած էին: Նրա վիզը հաստ ու կարճլիկ էր. նրա տեսքից ու վարքից երևում էր որ նա խարոյ և ջարը զու ³⁾ էր.

— Ո՛վ է այդ անձնաւարութիւնը, հարցրի ևս իմ բարեկամից: Եթէ նա մեր երկրում լինէր, մենք նրա ոտներին—մի լաւ դաս կրտայինք որ այդքան նազով չչարժուէին:

— Նրա պէս մարդուն՝ մենք այս օրերս exquisite ենք ա-

¹⁾ Պարսկաստանում պատանիները՝ յատկապէս կանացի գէմբ ունեցողները՝ ըրրը են կոչւում, որ նշանակում է անմօրուք.

²⁾ Արեւելոց մէջ, երբ ասում է թէ այս ինչ մարդի բաճկոնը պինդ կպած է իր մարմնին, փոխարեքական մտքով նշանակում է որ նա սգուոր է:

³⁾ Բառաբար թարգմանութեամբ՝ նշանակում է խլոտ խոտոյ, իրաւից բաներ պատմող:

սում, այն ինչ առաջները դամ բըկ¹⁾ էինք ասում: Դէ տես, մօղան մինչև անգամ մեր բանաձևերն էլ փոխում է:

— Կամ բըկ, դամ բըկ, կրկնեցի եւ մտածելով ուրեմն այդ մարդը անդր ջրհեղեղեան դարում ապրող «անծանօթներից» մէկի սերունդից պիտի լինի—Նա նիմնար²⁾ է. ինչքան դարմանալի է որ մեր և ձեր լեզուն այսքան մօտ են իրար:

— Ինչպէս, զարմացաւ բարեկամս, ինչպէս թէ մեր և ձեր լեզուն մօտ են իրար:

— Հա՛, ստացի եւ. ուրեմն դուք չէք կարդացել մեր պատմութիւնը: Ըստ մեր թարիխի³⁾, Դամ բըկ սերունդն էր մեր այն թագաւորներից մէկի՝ որոնք ապրում էին Աղամից առաջ. հիմա հասկանում էք ինձ:

Բարեկամս ծիծաղեց և ասաց.

— Աստուած վկայ, զա շատ լաւ կատակ էր:

Եւ նա բաժանուեց ինձանից այդ կատակը կրկնելու իր միւս բարեկամների համար:

Ամբողջ այս խօսակցութեան միջոցին, ղեկավան իմ աչքում չէր, երևացել, բայց յետոյ եւ նրան պտայ շրջապատուած շատ խանութներով, որոնք, ինչպէս երևաց, լուրջ կերպով զննում էին նրա զգեստը: Նա բոլորովին տարուած էր երևում մի երիտասարդուհու հրապոյրներիով, որին նրան աջողուել էր նստացընել իր կողքին և որի հրաշալի գէմքի վրայ նա նայում էր որպէս մի Մաջնուն:

Եւ համատուրիւն համարեցի ինձ բաւական հեռու պահել նրանից. որովհետեւ վերջ ի վերջոյ եւ նման էի Սաադիի կաւի կտորին՝ որն իր անուշահոտութիւնն ստացել էր վարդին մօտ լինելով: Եւ թէպէտ պէտք էր որ եւ աւելի մօտից ծանօթանայի ինձ շրջապատող դիւթիչ կանանց մի քանիսի հետ, այնուամենայնիւ ստակալով իմ իշխանաւորի նախանձից՝ վճռեցի դեռ ինձ թաղնուած պահել աննշանութեան վարազուրի կտակ:

Երբ հասաւ հրաժեղտի ժամը, որ համարեա մեր առաւօտեան աղօթքի ժամանակն էր, եւ մնաք բարով ասացի բարեկամիս, և ցանկալով որ նրա բարեկամական սէրը երբէք չնուազի՝ ղեկավանի հետ մտայ կառքը:

1) Damned buck. 2) Պարսկերէն կէս գլուխ է նշանակում. 3) Թարիխ, պատմութիւն:

Գլ. Լ.

Մերքա Ֆրուզը ս'ըրանարուժ է: Կոս գնում է օպ'երտ ուր տեսնում է մի խ'ոկիատակ՝ օրին նա խ'ոս ցանկանում է տանել իր Շանի համար:

Կառքով տուն վերադառնալիս գետպանն իր յուզմունքնե-
րը զսպել չկարողանալով՝ բացականչեց.

— Ա՛հ, հանջի, մօրուքդ վկայ օր սիրաս խորովում է: Դու
երբէք տեսել էիր այդպիսի աչքեր, այդպիսի ատամներ և այդ-
պիսի մազեր: Նրա մորթն այնքան նուրբ է, որ գինին նրա
կոկորդից ցած գնալիս՝ մարդ կարող է տեսնել: Ո՛չ մի վրա-
ցուհի արժանի չէ նրա կօշիկներն անգամ վերցնելու. բայց
ի՛նչ օգուտ ունին այս իմ զգացումները... Մենք պարսիկ ենք,
և այս անհաւատները մեզ ազջիկ չեն տայ, չեն տայ կթէ մենք
մինչև անգամ համաձայնենք գերծել մեր մօրուքը և իրանց
զլխարկների պէս զլխարկ ծածկենք մեր զլխին: Ապա ի՛նչ պի-
տի արած... մխ, հանջի, խօսիր:

— Ես ի՛նչ եմ կարող ասել, ո՞վ գետպան, պատասխանեցի
ես: Ճշմարիտ որ նա շատ գեղեցիկ արարած է, բայց դուք ի՛նչ
բարերարխտութեամբ ծանօթացաք նրա հետ:

— Նա նոյն անձն է, ասաց նա, որի աչքերն հանդիպեցին
իմինիս այն օրը՝ երբ ես գտնուեցայ թաղաւորի և իր լորդերի
ժողովում: Այս երեկոյ էլ, հէնց որ մենք իրար տեսանք, պարզ
էր որ իրար կը ճանաչէինք: Մենք երկար նայեցինք իրար,
նրա մայրը նրան ինձ մօտ բերեց, և այն բոլեկից ես... ես...
սիրահարուեցի... բայց ի՛նչ անենք:

— Մենք մի քանի տուն ոտանաւոր պիտի տանք նրա
մասին, պատասխանեցի ես: Այդպիսի բանը երբէք չէ կարող
առանց բանաստեղծութեան լինել:

— Բայց յիրաւի, ասաց նա, ես շատ յափշտակիչ խօսքեր
ասացի նրան, և իհարկէ ոտանաւորով ասացի. բայց ո՞վ էր
ինձ հասկանում... Ճիշտ է, մէհմանդարն աշխատեց թարգմա-
նել արտայայտութիւններս, սակայն փոխանակ կակղացնելու
նրա սիրտը, նա էլ, նրա մայրն էլ, մեզ շրջապատողներն էլ
միայն ծիծաղեցին և խնդրեցին ինձ ասածներս զրի անցկաց-
նել:

— Եւ դուք ի՛նչ ասացիր.

— Ես կրկնեցի Հաֆէզի այս դիւթիչ տաղը.

«Գհնա, ո՞վ դեփիւտ, ասն այդ մատաղ Չէյրանին,

«Ինչու ես մեզ քշել լիւններն ու անապատները»:

— Եթէ այդ խօսքերը չեն կարողացել գրաւել նրա սիրտը, սասայի ես, էլ ոչ մի ուրիշ բան չէ կարող: Բայց դուք մէկ բան էլ կարող էք անել. նրա համար մի քանի ընծաներ ուղարկեցէք— մի քանի շալեր, աչքի ներկ և փրփուզաներ՝ ձեր բախտը շատացնելու համար: Մի նամակ էլ պիտի գրէք կարմիր թանաքով:

— Ա՛յ խ, այս երկիրը շատ վտանգաւոր է մուսուլմանի համար, սասայ նա, և իջաւ կտորից: Կանանց աչքերն անզուժ են շարունակեց նա. նրանք աջ ու ձախ սպանում են, և այս ազգի սովորութիւնները խարուսիկ են անջքան որ մարդ իր յոյսը միայն Ալլահի վրայ պիտի դնի...

Այդ ժամանակից՝ ղեսպանն այլևս ոչ ինձ և ոչ էլ իր հետևորդներից որևէ մէկին տարաւ անգլիացւոց հանդէսները: Թէ արդեօք նա վախենում էր մեզանից՝ կարծելով որ մենք լրտեսի դեր էինք կատարում իր շարժումների վրայ և հազորում էինք Շահին, կամ թէ նա ցանկանում էր անգլիացւոց սովորութիւնների համեմատ վաշտել, և կամ թէ արդեօք նա վախենում էր որ մենք մի գուցէ հակառակորդ հանդիսանալինք իրեն անջ հուրինների շրջանում՝ որոնց ինքը պարծենում էր որ իբր թէ իր գրաւիչ անձով կարողացել էր կամ կարող կը լինէր հրապուրել՝ մենք չգիտէինք. բայց նա այդ ժամանակից, այդ հանդէսից յետոյ, միշտ դուրս էր գնում մի միայն մէհմանգարի ընկերակցութեամբ, և մենք մնում էինք տանն և զրազում էինք մեր թէսրիներով: ¹⁾ Նա միայն անջ ժամանակ էր իր ամբողջ խմբին դուրս տանում, երբ իր բարձր աստիճանն, իր արժանապատուութիւնն պահանջում էր: Նա երբևիմ գնում էր մեծ հանդիսատեղիներ, որոնց մի քանիսը թագաւորական հաստատութիւններ էին: Եւ երբ նա այդպիսի տեղեր է գնում, մեզ իր հետը տանում էր, թէպէտ Մահամէդ բէգը, որը ամեն օր աշխատում էր ընթանալ մեր կրօնի պահանջների համաձայն՝ միշտ հնարք էր գործ գնում տանը մնալ:

Այնտեղ, որտեղ ղեսպանը ամենից շատ էր գնում, մի տուն էր, ուր միայն պար և երաժշտութիւն էր տեղի ունենում: Առաջին գիշերը որ մենք գնացինք այդ տունը, մենք շատ սքանչելի բաներ տեսանք, թէպէտ մէհմանգարն մեզ արդէն տեսել էր որ զարմանալի բաներ պիտի տեսնէինք:

Մենք իսկապէս շատ զարմանալի բաներ տեսանք: Երբ այդտեղ մտանք, ղեսպանը տեղաւորուեց մի փոքրիկ բջիջում որպէս մի մեղու իր խորիսխի մէջ: Եւ այդ տեղում նստած ժամանակ՝

1) Մեղեպիկներ:

այնպիսի տեսարաններ բացուեցին մեր առջև, որ խօսքով նրկարագրել չէ կարելի—տեսարաններ՝ որ ոչ մի պարտիկ չէ կարող երևակայել եթէ իր աչքերով շտեմնի: Մի ահագին տամ շուրջը դրուած էին բջիջներ, նման այն մէկին՝ որի մէջ նրստել էր զեսպանը: Այդ բջիջներու նստած էին մարդիկ ու կանայք, արձակ, համարձակ, առանց քաշուելու: Իրանց ներքեւս պուխների մի ծով կար: Ամբողջ տեղը լուսաւորուած էր լամպերով ու մոմերով: Լուսաւորութիւնն աւելի շատ էր քան այն չքեղ լուսաւորութիւնը որ կրրեիցէ կզկէ մեր Շահի պալատում: Երաժշտութիւնը մեր ականջին խորթ էր հնչում, մենք բան չէինք կարողանում հասկանալ դրանից. հազարաւոր գործիքներ միասին խառնաշփոթ ձայներ էին հանում—ձայներ՝ որոնք անգլիացիների համար երկնային՝ բայց մեզ համար նոր և ասլեցուցիչ էին:

Մենք շատ ցանկանում էինք անգլիացիներին մի նմոյշ ցոյց տալ մեր քամանչա ածողներից, և լսել տալ Շահի նազարխանի փողերի և սիրտ շարժող թմբուկների ձայները:

Յանկարծ մի ահագին վարպոյր բարձրացաւ և իսկոյն մեր աչքի առաջ բացուեցին իրար յաջորդող այնպիսի տեսարաններ, որ ոչ մի գրիչ չի կարող նկարագրել: Ամենից առաջ պատմուեց մի ողբերգական պատմութիւն, որը գրեթէ մեզ լացացրեց. յետոյ կատարուեցին պարերի այնպիսի քաջագործութիւններ, որ ոչ ոք կրազում անգամ չէ կարող մտածել:

Պատմութիւնը սկզբից մինչև վերջ կրգի ձայնով պատմուեց, և եթէ երգիչների և երգչուհիների ձայները այնքան լաւ կրթուած լինէին, որ նրանք կարողանային մեր կրգերն երգել մեր Շահի առաջ՝ վերջինս անշուշտ այնպէս կը յափշտակուէր՝ որ վայր կը ընկնէր իր գահից:

Գալով պարին, պիտի խոստովանել որ, այնքան սքանչելի էր, որ մեր մէջ խիստ տարբեր կարծիքներ կազմուեց թէ՛ արդեօք պարողները կենդանի մարդիկ էին, թէ ինքնաշարժ մեքենաներ: Այս խնդրի մասին մենք շատ վիճեցինք, շատ կարծիքներ յայտնեցինք, շատերս չէինք համոզուում որ պարողները մարդիկ են. մեզ թւում էր թէ մեր աչքերը խարում էին մեզ: Վերջը մի բարեբնոյթ Ֆրանկ կամք յայտնեց պարդել զբժուարութիւնը. նա մեղանից երկուսին առաջնորդեց շատ երկար, նեղ և ծուռ ու մուռ անցքերով, և տարաւ ճիշտ այն տետեղը՝ ուր պարում էին, և ուր նա իսկոյն համողեց մեզ, որ պարողները կենդանի մարդիկ ու կանայք էին: Մենք շատ զարմացանք, երբ այնտեղ տեսանք, որ մեր աչքի առաջ շարժուող ջիններն ու փէրիները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ ներկուած